

Կոռուպցիան Հայաստանում. 2008թ. անցկացված հանրային կարծիքի ընտրանքային հետազոտություն

Հետազոտության համառոտ նկարագրությունը

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ)-Հայաստանը, ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի շրջանակներում, 2008թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, Հայաստանի բոլոր մարզերի 1549 չափահասների շրջանում անցկացրել է կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ընտրանքային հետազոտություն:

Հարցման գործիքները և ընտրանքի մեթոդաբանությունը

Հարցման գործիքը՝ հարցաթերթը պարունակում է կոռուպցիայի ընդհանուր ընկալմանը, դրա դրսևորման ձևերին ու տարբեր ոլորտներում տարածվածությանը, կոռուպցիոն անհատական վարքագծին, կառավարության և ՀԿ-ների հակակոռուպցիոն գործողությունների մասին տեղեկացվածությանը և այլնին վերաբերող ավելի քան 80 հարց: Իբրև տնային տնտեսությունների ընտրանքի շրջանակ օգտագործել է Հայաստանում էլեկտրացանցերի բոլոր բաժանորդների ցանկը: Բազմաստիճան քլաստերային ընտրանքի մեթոդը կիրառելու համար այն նախապես ստրատիֆիկացվել է ըստ քաղաքային, գյուղական վայրերի և ըստ մարզերի: Ստրատաներից յուրաքանչյուրում (քաղաքային և գյուղական) ընտրանքի չափը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով 95% վստահության միջակայքը և 5% սխալի թույլատրելիության սահմանը: Յուրաքանչյուր ստրատայում ձևավորվել են մոտ 500 տնային տնտեսությունից բաղկացած քլաստերներ (աշխարհագրորեն մոտիկ), իսկ յուրաքանչյուր քլաստերում անցկացվել է ոչ ավել, քան 12 անհատական հարցազրույց: Ընտրված տնային տնտեսություններում հարցվողի պատահական ընտրությունն իրականացվել է չափահաս անդամներից՝ առաջիկա ծննդյան օրվա մեթոդով, բացառելով պատասխանողի փոխարինման հնարավորությունը:

Հանրային կարծիքի որոշ դրվագներ

Ըստ հարցման արդյունքների, 10-ից ավելի քան 8-ը կարծում են, որ կոռուպցիան շատ լուրջ հիմնախնդիր է Հայաստանում, սակայն ոչ բոլորն են այն համարում հայաստանյան իրականության բնական երևույթ: Չնայած կոռուպցիայի շատ բարձր մակարդակին, շուրջ 30%-ը կարծում են, որ այն նվազել է նախորդ տարվա համեմատ: Շատերի կարծիքով կոռուպցիան տարածված է առավելապես պետական հաստատություններում և հիմնարկներում: Հարցվողների երկու երրորդը համարում է, որ դատախազությունը և իրավապահ մարմինները մեծապես կան որոշ չափով կոռումպացված են: Կոռուպցիայի մակարդակը բավական բարձր է համարվում նաև այնպիսի ոլորտներում և պետական ծառայություններում, ինչպիսիք են Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (66%), ոստիկանությունը (65%), ճանապարհային ոստիկանությունը (62%), առողջապահությունը (61%) և կրթությունը (58%): Չնայած կոռուպցիայի տարածվածությանը հայ իրականության մեջ, հարցվածների մեծամասնությունը հակված չէ ահազանգելու կոռուպցիոն գործողությունների մասին: Ավելին, նրանցից շատերը նույնիսկ չգիտեն, թե այդպիսի դեպքերում ինչ հաստատությունների կարող են դիմել: Հարցվածներից շատերը ոչ միայն չգիտեն, այլ նաև վստահություն չունեն հակակոռուպցիայի հարցերով զբաղվող ՀԿ-ների նկատմամբ: Եվ վերջապես, հարցվածների մեծամասնությունը (53%) կշարունակի կաշառք տալ, քանի որ չի տեսնում հարցերը լուծելու կամ գործընթացներն արագացնելու այլ գործուն միջոց:

Հետազոտության արդյունքների հասանելիությունը

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, հավաքագրված տվյալների բազան (SPSS ֆորմատով) և զեկույցը ազատորեն հասանելի են [այստեղ](#): Դրանք կարելի է ստանալ նաև լազերային սկավառակով: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՌԿԿ-Հայաստանի ծրագրերի ղեկավար Տաթևիկ Ձոհրաբյանից՝ tatevik@crcc.am էլ. հասցեով:

ՀՌԿԿ-Հայաստան

ՀՌԿԿ-Հայաստանը՝ Ադրբեյջանի, Հայաստանի և Վրաստանի մայրաքաղաքներում 2003թ. հիմնված և տարածաշրջանում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակ հետապնդող հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանցի մի մասն է: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի գործակցությամբ գործող ՀՌԿԿ-Հայաստանը տեղացի գիտնականներին և պետական գործիչներին առաջարկում է հետազոտություններ, դասընթացների և համագործակցության բազմաթիվ հնարավորություններ:

ՀԳՄԾ

Մեկնարկելով 2007թ. հուլիսին որպես համապարփակ հակակոռուպցիոն նախաձեռնություն, որի նպատակն է կոռուպցիայի նվազեցումը թե՛ տեղական, թե՛ համակարգային մակարդակներում՝ ԱՄՆ ՄԶԳ ՀԳՄԾ-ն օժանդակում է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին՝ (1) ստեղծելով բողոքների արձագանքման մեխանիզմներ և իրականացնելով համակարգային ու ընթացակարգային բարեփոխումներ, (2) մշակելով և իրականացնելով հակակոռուպցիոն նախաձեռնություններ ընտրված պետական մարմինների հետ, (3) օժանդակելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հակակոռուպցիոն գործողության համախմբմանն ուղղված նորարար մոտեցումներ մշակելիս, ինչպես նաև (4) բարձրացնելով հակակոռուպցիոն իրազեկության մակարդակը երիտասարդների և մեծահասակների շարքերում: ՀԳՄԾ-ն իրականացնում է «Կասալս Ենդ Առշիեյթս» Ինք. ընկերությունը: